

- Ձմեռուի վանքին սեպհական թիւ 113 Շա-
րակնոցը, «ի վայելուճն Երզնկացի Տէրա-
ցու Սահակին»: Տէր Սարգիս թէեւ կը կոչ-
ուի «Գրագիր» այսինքն գրչագիրի իմաս-
տով, սակայն իրմէ հասած սեւէ գրչու-
թիւն չունինք, ո՛չ չալէպի և ո՛չ այլ մա-
տենագարաններու մէջ: Տէր Սարգիս ակ-
նագործ նշանաւոր Գահանան, ՍԻՔԱՋԱՆ
մականուանեալ, արդէն վախճանած է
1663 ին, և որուն դամբարանը կարելի չե-
զաւ գտնել ցարգ:
- 132.- 1684.— Այս է սապան ՏէՐ ԹՈՐՈՍ
ՔՉԱՆԱԻՆ որ հանգեաւ ի Քս. քվին.
ՌՃԼԳ (1684). Աձ. ողորմի ասաց:
- 1684 ին վախճանած այս Տէր Թորոսի
մասին զբխախտաբար սեւէ լրացուցիչ
տեղեկութիւն չկրցանք ունենալ ցարգ:
Զինքը պէտք չէ շփոթել 1709 ին վախճա-
նած և Ս. Գառասնից բակին մէջ թաղ-
ուած այլ Տէր Թորոսի մը հետ: Զարմա-
նայի է որ գրեթէ միեւնոյն տարուան մէջ
իրարու հետեւէ կը վախճանին երեք քա-
հանաներ. հանդիպում թէ տարածամ
մա՞՞ չալէպի մէջ, երբ այս քահանայը
փոխանակ եկեղեցւոյ բակին մէջ ամփոփ-
ուելու, կ'երթան կը թաղուին Աղիզիէի
Գերեզմանատան հետաւոր ծայրը, երեքն
ալ քովէ քով:
- 133.- 1685.— Այս է սապան հանգստեան
ԽՈՃՍ ԱԿՈՒՃԱՆԻ ... (որդի՞) ՄԱՀՏԵ-
ՍԻ ՄՈՒՐԱՏՃԱՆԻՆ որ հանգեաւ ի Քս.
քվին ՌՃԼԳ (1685). Աձ. ողորմի ասա-
ցեմ:
- 134.- 1685.— Այս է սապան հանգստեան
ՊԵՏՐՈՍԻ որ եւ հանգեալ է ի Քս. քվին
ՌՃԼԳ (1685). Աձ. ողորմի ասացեմ:
- 135.- 1686.— Այս է սպն հնգստեան ՄԻԱ-
ՏՆՅԻ՞ ՊՕՂԿԱՆՅ ՍՏԵՓԱՆԻ որդի ԱԾԱ-
ՏՈՒՐԻՆ որ հանգեաւ ի Քս. քվին 1135
(1686):
- 136.- 1686.— Այս է սապան ԹՕԽԱԹՅԻ
ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԻ որդի ՄԱՀՏԵՍԻ ԳՐԻ-
ԳՈՐԻՆ որ յԵՐՈՒՍԱՂԷՄ գնալն եկն ի
ՀԱԼԱՊ, հանգեաւ ի Քս. ՌՃԼԵ (1686):
Մայիսի ժգ: Աձ. ողորմի ասացեմ:
- 137.- 1686.— Այս է հանգիստ ԶՈՒՂԵՅԻ
ՔԱԼԱՓԱՇԱ՞ ՊԱԻՂՈՍԻ որդի ՄԱՀՏԵ-
ՍԻ ԱՂԱԶԱՐԻՆ որ հանգեաւ ի Քս. քվին
ՌՃԼԵ (1686):
- 138.- 1687.— Այս է սապան ՏԻՐԱՅՈՒ
ՄԻՆԱՍԻՆ որ հանգեաւ ի Քս. քվին
ՌՃԼԶ (1687) դեկտեմբեր ամսոյ ԻՔ. Աձ.
ողորմի ասացեմ:
- 139.- 1687.— Այս է սապան ԱՐԶՐՈՒՄ-
ՅԻ ՔՈՒՐՔՉԻ ՈՎԱՆԷՍԻ . . . (Երկու-
րսո չի կարգացուիր) որ հանգեաւ ի
Քս. ՌՃԼԶ (1687) Յուլիս ժՁ. Աձ. ողոր-
մի ասացեմ:
- 140.- 1687.— Ա(յ)ս է սապ(ա)ն ՆՈՐԱՇԷՆ-
ԿԵՅԻ ԱՌԱՔԵԼԻ. . . (որդի՞) ԽԱԶՍԱՏՈՒ-
ՐԻ քվին ՌՃԶ (1687?) Հոկտեմբերի Ե.
օրն:
- 141.- 1688.— Այս է սապան հանգստեան
ԳԱՍԲԱՐԻՆ որ հանգեաւ ի Քս. քվին
ՌՃԼԷ (1688). Աձ. ողորմի ասացեմ:
- 142.- 1688.— Այս է սապան ՏԷՐ ԳՐԻ-
ԳՈՐԻ որդոյն ժամասաց ՅԱԿՈՒԲԻՆ որ
հանգեաւ ի Քս. քվին ՌՃԼԷ (1688). Աձ.
ողորմի ասացեմ:
- 143.- 1688.— Այս է սապան ԱՊՏԼԱՅԻ
դստերն ԱԼԱՄԻՆ որ հանգեաւ ի Քս.
քվին ՌՃԼԷ (1688):
(Տապանաքարս կիսովին հողին տակ ծած-
կուած ըլլալուն, արձանագիրը ի նորոյ
երեսն կլաւ):